# ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի N 1 հավելվածում՝

1) «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 1

» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի 1

».

2) «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ 12

» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի տեղակալ 12

».

3) «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ 10

» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ 10

».

4) «

Անկախ պետական մարմնի նախագահ 1

» տողը ուժը կորցրած ճանաչել.

5) «

Անկախ պետական մարմնի նախագահի տեղակալ 8

» տողը ուժը կորցրած ճանաչել.

6) «

Անկախ պետական մարմնի անդամ 7

» տողը ուժը կորցրած ճանաչել։

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: